Résolvable (ռէզոլվէպլ) ԹԺ. Վերա- ծելի : Լուծանելի, գիւրալոյց : մեկնելի :

Résoluble (ռէզոլիսոպլ) ԹԺ. Լուծա- նելի, հալելի :

To Résolve (ռէզոլվ) Բ, Կ. Լուծանել : մեկնել, բացատրել, ցուցանել, բառնալ զտարակուսան : որոշել, վճռել, հաս- տատել : վերածել, փոխարկել, դարձու- ցանել, Լուծանել, վերլուծանել, հա- լել, ցնդել :

To Résolve, Բ, Լ. Որոշել զմիտս, դը- նել կամ հաստատել 'ի մտի : հալել, Լու- ծանել, ցնդել : հաստատել 'ի կարծիս :

Résolve, Գ. Վճիռ, որոշում, հաս- տատութիւն : որոշումն մտաց, խոր- հուրդք, միտք, առաջադրութիւն :

Résolvedly (ռէզոլվէպլի) Ժ. Քաջու- Թեամբ, պնդագոյնս, անյողողք սրտի :

Résolvedness (ռէզոլվէսնէս) Գ. Պըն- դութիւն, հաստատութիւն :

Résolvent (ռէզոլվէնթ) Գ. Լուծիչ կամ քակտիչ դեղ :

Résolver (ռէզոլվէր) Գ. Որոշիչ, որ հաստատել զմիտս էր, որ դէն 'ի մտի : Լուծիչ, հալիչ, քակտիչ :

Résolutive (ռէզոլիտիւթ) ԹԺ. Քաջ, ան- վէհեր, անյողողք, հաստատուն, դիւ- րապատրաստ, յօժարամիտ, փոյթ :

Résolutely (ռէզոլիտիւթի) Ժ. Քաջու- Թեամբ, պնդութեամբ, անվէհեր, ա- րիաբար, հաստատութեամբ, անյող- քողք :

Résoluteness (ռէզոլիտիւթնէս) Գ. Հաս- տատութիւն, պնդութիւն, որոշումն :

Resolútion (ռէզոլիտիւթն) Գ. Լուծումն (դժուարութեանց) : վերլուծութիւն : Լուծումն, հալումն, քակումն, ցըն- դումն : որոշումն մտաց, առաջադրու- Թիւն, հաստատուն կամք : հաստատու- Թիւն կամաց կամ մտաց, պնդութիւն, արիութիւն, համարձակութիւն, աներ- կիւղութիւն : քաջութիւն : վճիռ, որո- շումն :

Résolutive (ռէզոլիտիւթի) ԹԺ. Լու- ծիչ, քակտիչ, ցրիչ :

Résonance (ռէզոնէնս) Գ. Հնչիւն, ձայն :

Résonant (ռէզոնէնթ) ԹԺ. Հնչող, ձայնաու, հնչեցուցիչ, քաջահնչող :

To Résórt (ռէզորտ) Բ, Լ. Գիւնել, ընթանալ, ապաւինիլ : յաճախել, էլա- նել, հասանել, ժողովել, երթալ : վն- ճակիլ, անկանիլ :

Résórt, Գ. Գողով, ամբոյս, միաբա- նութիւն, համախմբութիւն : ընթացք, գնացք, երթ, դիմումն : յաճախու- Թիւն, ստեպ այցելութիւն : էլք, զօ- րութիւն :

Résórtier (ռէզորտիէր) Գ. Որ յաճախ է կամ ստեպ երթալ :

To Résóund (ռէզոնանս) Բ, Կ. Հնչե- ցուցանել, անդրէն դարձուցանել զձայնն, արձագանգս արձակել : հնչեցուցանել, հուշակել, համբաւի հարկանել : գովել : հնչել, արտասանել :

To Résound, Բ, Լ. Մնդրէն հնչել կամ ձայնաու լինել, անդրէն դառնալ ձայնի : հնչել, լսելի լինել :

Résourcé (ռէզուրս) Գ. Ելք, հնար, դարման :

To Résow (ռէսո) Բ, Կ. Վերստիւն կամ կրկին սերմանել :

To Respeak (ռէսփէ) Բ, Լ. Մնդրէն ձայն տալ կամ առել պատասխանի :

To Respect (ռէսփէ) Բ, Կ. Մեծա- րել, յարգել, ակնածել, նկատել, փոյթ ունել : հայիլ, ակնարկել : հայիլ, դի- տել, ունել զհայեցուած :

Respect, Գ. Նկատ, նկատումն, փոյթ. մտածութիւն : յարգութիւն, պատիւ, մեծարանք : ակնածութիւն : քողցր հար- եցուած, հաճութիւն : աչառութիւն, մարդահաճութիւն : տեսութիւն, միտք, խորհուրդ, պատճառ : յարգերութիւն, եղանակ, հայեցուած : In respect, 'ի սակս, 'ի պատճառս, վասն, յաղագս, առ :

Respectable (ռէսփէպլ) ԹԺ. Յար- գոյ, յարգելի, պատուական, մեծարու :

Respecter (ռէսփէպլէր) Գ. Աչառու :

մարդահաճոյ, ակնսռու, ակնածու :

Respectful (ռիսփէհրֆու) Թժ. Յարգական, մեծարու, ակնածու, լի յարգանք, խոնարհական :

Respectfully (ռիսփէհրֆուլի) Ժ. Ակնածութեամբ, յարգանքով, պատուով :

Respectfulness (ռիսփէհրֆուսի) Գ. Ակնածութիւն, յարգութիւն :

Respective (ռիսփէհրիվ) Թժ. Աւանձին, իւր, յատուկ, սեպհական : յարաբերական, առնչական : յարգելի, մեծարու (ոչ է՛ի կիր) : զգուշաւոր, աշարճը, ակնածու (ոչ է՛ի կիր) :

Respectively (ռիսփէհրիվի) Ժ. Աւանձինն, այր իւրաքանչիւր առանձին, ըստ համեմատութեան, համեմատաբար : յարաբերաբար, առնչութեամբ, հայելով առ, նկատմամբ : աջառութեամբ, մարդահաճութեամբ (ոչ է՛ի կիր) : յարգութեամբ, մեծարանք (ոչ է՛ի կիր) :

Respersion (ռիսփէրսի) Գ. Մրհկումն :

Respiration (ռիսփիրէի) Գ. Շնչառութիւն, շունչ, սուրբառ շնչոյ : հանգիստ, դուլ, դադար :

To Respire (ռիսփայր) Բ, Լ. Շնչել, ձգել զգ, շունչ առնուլ : ոգի առնուլ, հանգչիլ, արծարծիլ սրտի :

Respite (ռիսփի) Գ. Թշուլ, Թշուտուութիւն, ներումն, ժամանակ, միջոց, յապաղումն : պարապ, դիւրութիւն, հանգիստ :

To Respite, Բ, Կ. Հանգուցանել, դիւրել, դիւր կամ հանգիստ տալ : յապաղել, յամեցուցանել, երկարել, ձգել :

Resplendence կամ Resplendency (ռիսփլէնդէն) Գ. Փայլիւն, պայծառութիւն, լոյս, ճառագայթ, լուսափայլութիւն :

Resplendent (ռիսփլէնդէն) Թժ. Փայլուն, շողողուն, պայծառ, լուսափայլ, լուսաճաճանչ :

Resplendently (ռիսփլէնդէնի) Ժ. Փայլմամբ, լուսափայլ, պայծառապէս :

To Respond (ռիսփոնս) Բ, Լ. Տալ պատասխանի : նմանիլ, համեմատիլ, յարմարիլ, ՚ի դէպ գալ :

Respondent (ռիսփոնսի) Գ. Պատասխանատու : խնդրագիր :

Response (ռիսփոնս) Գ. Պատգամ : պատասխանի : փոխ կամ ալելուք :

Responsible (ռիսփոնսի) Թժ. Որ ունի տալ պատասխանի կամ համար : երաշխաւոր :

Responsibility (ռիսփոնսիպի) Գ. Լինելն պատասխանատու կամ երաշխաւոր :

Responsion (ռիսփոնսի) Գ. Պատասխանի, պատասխանատուութիւն :

Responsive (ռիսփոնսիվ) Թժ. Պատասխանատու : համեմատ, պատշաճ, յանկար :

Responsory (ռիսփոնսրի) Թժ. Պատասխանական

Rest (ռէստ) Գ. Հանգիստ քնոյ, քուն, նինջ : ննջումն, փոխումն յատեաց, մահ, վախճան կենաց : դադարումն, կայ : հանգիստ, խաղաղութիւն, հանգարուութիւն, անդորրութիւն : դուլ, դադար : յեկարան, բուն : հանգստարան, տեղի հանգստեան : յոյս, սպաւնութիւն : վերջին փորձ : մնացորդ, մնացուած, աւելի, աւելորդ, մնացելն :

Rest, Թժ. Այլ, միւս, մնացեալ :

To Rest, Բ, Կ. Հանգչել ի քուն, ննջել, ՚ի քուն լինել : ննջել զքուն մահու, մեռանիլ, վախճանիլ : հանգչել, խաղաղիլ, հանգարիլ : պարապ առնուլ, շաբաթանալ : զկայ առնուլ, դադարել : կալ, մնալ : գոհ լինել, շատանալ : յեռնուլ, հաստատիլ, անպահիլ : մնալ, կալ, յաւելուլ :

To Rest, Բ, Կ. Հանգուցանել : դնել, յեցուցանել, հաստատել :

Restagnant (ռիստէնէնտ) Թժ. Լճացեալ, անշարժ մնացեալ :

To Restagnate (ռիստէնէնտ) Բ, Լ. Լճանալ, անշարժ մնալ :

Restagnation (ռիստէնէնտի) Գ. Լճացումն, անշարժ դադարումն :

Restauration (ռէստորէի) Գ. Նորութեան, նորութիւն :

To Restem (ռիստէմ) Բ, Կ. Մղել ընդդէմ ընթացից գետոյն :

Restful (ռէստֆու) Թժ. Խաղաղ, անդորր, խաղաղաւետ, հանգարեալ :

Restharrow (ռէստհէրո) Գ. Էբոյս ինչ : Restiff (ռէստիֆ) Թժ. Կամակոր, յամառ, դժկամակ : անշարժ (ոչ է՛ի կիր) :

Restifness (ռէստիֆնէս) Գ. Կամակորութիւն, յամառութիւն, խստութիւն :

Restinction (ռիստիքի) Գ. Շիջումն :

Restitution (ռէստիտիսի) Գ. Հատուցումն, վճար, դարձուցանելն յետ : դարձ անդրէն, նորութեան, վերստին հաստատութիւն, վերադարձ :

Restless (ռէսլէս) Թժ. Անքուն, աննինջ, աննիրհելի : անհանգիստ, անդադար : խռովեալ, տատանեալ : յողողող, անհաստատ : մշտաշարժ, յարի շարժման :

Restlessly (ռէսլէսի) Ժ. Անդադար, անհանգիստ : անքուն :

Restlessness (ռէսթլէսնէս) 4. Լինելն կամ մնալն անքուն: անհանգստութիւն, խռովութիւն, շարժումն, յուզումն, տատանումն:

Restorable (ռէսթօրէպլ) ԺԺ. Զոր մարթ է նորոգել կամ դարձուցանել յառաջին վիճակն:

Restauration (ռէսթօրէշն) 4. Նորոգութիւն, կազմութիւն:

Restorative (ռէսթօրէտիվ) ԺԺ. Նորոգիչ, կազմութիւն, զորացուցիչ:

Restorative, 4. Կազմութիւն կամ զօրացուցիչ գեղ:

To Restore (ռէսթօր) Բ, Կ. Հատուցանել, տալ կամ դարձուցանել անգրէն: նորոգել, դարձեալ շինել, դարձուցանել յառաջին վիճակն, կազմութիւն, զօրացուցանել: բժշկել, դարմանել, բուժել, առողջացուցանել: սրբադրել, ուղղել:

Restorer (ռէսթօրըր) 4. Նորոգիչ, դարմանիչ, զորացուցիչ:

To Restrain (ռէսթրէյն) Բ, Կ. Սեղմել, պնդել: ամփոփել, անձկացուցանել, չափաւորել: սանձել, սանձահարել, ճնշել, նուաճել, քարշէլ, զսպել, զուսպ ունել: կարգելու, խափանել, վահել, ունել: կարճել, համարձակել: պարտաւորել, ստիպել, ինեղ արկանել:

Restrained (ռէսթրէյնէպլ) ԺԺ. Զոր մարթ է սեղմել, ամփոփել կամ սանձել:

Restrainedly (ռէսթրէյնէպլի) Ժ. Սեղմամբ, ամփոփմամբ, ճշգրիւ, անձկաբոյնս:

Restraîner (ռէսթրէյնըր) 4. Սեղմիչ, ամփոփիչ, ունող, սանձահարող:

Restraint (ռէսթրէյնտ) 4. Սեղմումն, ամփոփումն: սանձ, սանձումն, նուաճումն: արգել, խափան, խափանումն: ճնշումն:

To Restrict (ռէսթրիկտ) Բ, Կ. Սեղմել ամփոփել, կարճել, չափաւորել:

Restriction (ռէսթրիկշն) 4. Սեղմումն, ամփոփումն, չափ, կողար:

Restrictive (ռէսթրիկտիվ) ԺԺ. Ամփոփիչ, որ չափ կամ սահման դնել: սեղմիչ:

Restrictively (ռէսթրիկտիվի) Ժ. Զափու, ճշգրիւ, անձկաբոյնս:

To Restringe (ռէսթրինջ) Բ, Կ. Սեղմել, պնդել: ամփոփել, կարճել, չափաւորել:

Restrington (ռէսթրինջիտ) 4. Սեղմիչ կամ պնդացուցիչ գեղ:

Resty (ռէսթի) ԺԺ. Կամակոր, յամար, խտասպարանոց:

To Resublime (ռէսսբլայմ) Բ, Կ. Վերս-

տալն գտել (ըստ քիմիականաց):

To Result (ռիշլէշ) Բ, Կ. Յետո կամ ընդ կրունկն դառնալ, ընկրկիլ: ծագել, յառաջ գալ, յառաջ երբիլ, վերնել: մտկաբերիլ, հետևել:

Result, 4. Յետո դարձումն, ընկրկ կումն, փախուստ անդրէն: ելք, վախճան, աւարտ: ծագումն, ծագեալն, յառաջ եկեալն: բաղադրութիւն: եղբայրացութիւն, վախճան բանից: վճիռ, որոշումն, դատանիք (ոչ է՝ կիր): հետևանք, հետևողութիւն:

Resultance (ռիշլէշն) 4. Ծագումն, ելք, հետևանք, հետևողութիւն:

Resumable (ռիշլէշէպլ) ԺԺ. Զոր մարթ է առնուլ վերստին:

To Resume (ռիշլէշմ) Բ, Կ. Առնուլ վերստին, դարձեալ ստանալ: առնուլ ՚ի բաց կամ անգրէն: վերստին կամ նորոգ սկսանիլ:

Resumption (ռիշլէշն) 4. Վերստին առումն կամ սկսուած:

Resumptive (ռիշլէշտիվ) ԺԺ. Որ առնու կամ սկսան վերստին:

Resupination (ռիսիոսֆիշն) 4. Անկումն յորայս կամ ՚ի վերայ թիկանց:

To Resurvey (ռիսըրվէյ) Բ, Կ. Վերստին յակն արկանել:

Resurrection (ռիշլէշն) 4. Յարութիւն, յառնելն ՚ի մեռելոց:

To Resuscitate (ռիշլէշտիշտ) Բ, Կ. Յարուցանել, վերստին կենդանացուցանել:

Resuscitation (ռիշլէշտիշտիշն) 4. Յարութիւն, կանգնումն, վերստին կենդանութիւն:

To Retail (ռիթէյլ) Բ, Կ. Վաճառել մասն մասն, մանրավաճառ լինել:

Retail, 4. Վաճառումն մասն մասն կամ սակաւուք, մանրավաճառութիւն:

Retailer (ռիթէյլըր) 4. Որ վաճառէ մասն մասն, մանրավաճառ:

To Retain (ռիթէյն) Բ, Կ. Ունել, պահել: պահպանել, ոչ թողուլ, ոչ կորուսանել: վարձել, ունել ՚ի վարձու:

To Retain, Բ, Կ. Ունել զանձն, յարիլ, պատկանիլ, վերաբերիլ, հարկանիլ: կալ, մնալ, շարունակել (ոչ է՝ կիր):

Retainer (ռիթէյնըր) 4. Կուսակից, յարեալ, որ կատեալ կայ, թոշակաւոր:

To Retake (ռիթէյնտ) Բ, Կ. Առնուլ վերստին:

To Retaliate (ռիթէյնիշտ) Բ, Կ. Հատուցանել զփոխարէնն, տալ զսրիտունն, փոխարինել, հատուցանել ընդ վրէժխնդիր լինել:

Retaliation (ռիթէլիէլէն) Գ. Փոխարէն, արխաւոր, հատուցումն, վրէժ:

To Retard (ռիթարդ) Բ, ն. Արգելալու, կասեցուցանել: յապարկել, յամեցուցանել, երկարել:

To Retard, Բ, ն. Յապարկել, յամել, անադանիլ, կասել, յեանիլ:

Retardation (ռիթարդիւն) Գ. Յապարկումն, անադանումն:

Retarder (ռիթարդեր) Գ. Որ յապարկէ, յամեցուցիչ, արգելիչ:

To Retch (ռիչ կամ ռէլ) Բ, ն. Փըսխել, ժայթքել:

Retchless (ռիչլէս) ԹԺ. Անհոգ, անփոյժ, պղերգ, դանդաղ:

Rétention (ռիթէտէն) Գ. Բացումն, արտայայտութիւն:

Rétention (ռիթէտէն) Գ. Ունելն, ըմբռնումն, պահումն, պահանդութիւն: արգել, արգելան, զգուշութիւն, պահեստ, բանտ: արգելումն, խափանումն: մտառութիւն, յիշողութիւն:

Rétentive (ռիթէտիւ) ԹԺ. Ունող, պահող, որ արգելու, որ ըմբռնեալ ունի: պահպանողական (կարողութիւն), յիշողական, քաջամուտ:

Rétentiveness (ռիթէտիւն) Գ. Պահպանողութիւն, քաջ մտառութիւն:

Réticence (ռիթիսէն) Գ. Լռութիւն, ծածկելն ընդ լռութեամբ:

Réticle (ռիթիս) Գ. Յանց կամ ուռկան փոքրիկ:

Reticular (ռիթիսիւս) ԹԺ. Յանցակերպ:

Reticulated (ռիթիսիւսիւս) ԹԺ. Յանցակերպ, հիւսակէն:

Rétiform (ռիթիֆորմ) ԹԺ. Յանցակերպ:

Rétinue (ռիթիսիւս կամ ռիթիսիւս) Գ. Բազմութիւն պաշտօնեկից կամ ծառայից՝ որ գնան զինի, ընթացակիցք կամ ուղեկիցք առ ՚ի պատիւ, ընթացակցութիւն, ընկերութիւն:

To Retire (ռիթայր) Բ, ն. Մեկնիլ, մեկուսանալ, առանձնանալ: տեղի տալ, գնալ ՚ի բաց, հրաժարիլ, յետս կալ: անկանիլ ուրեք, ապաւինել, գիմել: խոյս տալ, փախչել, ղերծանիլ, փախստեայ անկանիլ:

To Retire, Բ, ն. Քարշել, ձգել, տունել, մեկուսացուցանել: ամփոփել, քարշել յետս, յինքն կամ ՚ի ներքս:

Retire, Գ. Մեկնիլ, մեկուսանալն (ոչ է՛ր կիր): առանձնութիւն, տեղի առանձնութեան, առանձին տեղի:

Retired (ռիթայր) ԹԺ. Առանձին, ծածուկ, գաղտնի, ներքին: մեկնեալ,

մեկուսացեալ, հեռացեալ, ամփոփեալ: առանձնացեալ, մեկուսի:

Retiredness (ռիթայրիւս) Գ. Առանձնութիւն, առանձնասիրութիւն:

Retirement (ռիթայրմէտ) Գ. Առանձնութիւն, առանձին տեղի, մեկուսի բնակութիւն: առանձնական կեանք, առանձնասիրութիւն: մեկուսանալն, հեռանալն, ամփոփումն:

Retold (ռիթոլ) ԹԺ. Վերստին աւացեալ, պատմեալ կամ յիշատակեալ:

To Retort (ռիթորտ) Բ, ն. Պարձուցանել անգրէն կամ յետս: դարձուցանել, շրջել: ոլորել, գալարել, թեքել:

Retort, Գ. Շրջումն, դարձուած բանի կամ պատասխանի ըստ արժանեաց կամ ՚ի կշտամբանս հակառակորդին: գալարափող անօթ (քիմիականաց կամ ցքահանից):

Retorter (ռիթորտեր) Գ. Որ շրջէ կամ ոլորէ:

Retortion (ռիթորտիւն) Գ. Շրջումն, ոլորումն, գալարումն, թեքումն:

To Retoss (ռիթոս) Բ, ն. Ընդոստուցանել յետս:

To Retouch (ռիթուչ) Բ, ն. Վերստին ձեռն արկանել, ուղղել, կատարելագործել, սրբաբանել:

To Retracer (ռիթրէյս) Բ, ն. Վերստին հետազօտել:

To Retract (ռիթրէտ) Բ, ն. Յետս դարձուցանել, նահանջել, հրաժարիլ: ՚ի բաց առնուլ, հատանել:

To Retract Բ, ն. Ստրջանալ, ոչ հաւանիլ, հրաժարիլ:

Retraction (ռիթրէտիւն) Գ. Նա հանջումն բանից, ստրջանալն:

Retraction (ռիթրէտիւն) Գ. Յետս դարձուցումն կամ փոփոխութիւն, նահանջումն: նահանջումն բանից: հրաժարումն:

Retraict (ռիթրէյտ) Գ. Նահանջումն, դարձ յետս (ոչ է՛ր կիր):

Retrait (ռիթրէյտ) Գ. Կենդանագիր, պատկեր (ոչ է՛ր կիր):

Retreat (ռիթրէտ) Գ. Պարձումն յետս, մեկուսանալն: առանձնութիւն: առանձին տեղի: տեղի ապաւինի, ապաստանարան, հովանի: դարձ զօրաց ՚ի պատերազմէ, նահանջումն:

To Retreat, Բ, ն. Մեկուսանալ, առանձնանալ: ապաւինիլ, ապաստան լինել, անկանիլ ուրեք: տեղի տալ, յետս դառնալ, նահանջել: մեկնիլ, հեռանալ, ՚ի բաց գնալ:

Retreated (ռիթրէտիւս) ԹԺ. Մեկուս

սացեալ, մեկուսի, առանձնացեալ:

To Retrench (ռէտրէնչ) Բ, ն. Հաւանեալ, յապաւելլ, քշտեալ, 'ի բաց կրտրել, կարճել, կրճատել, բառնալ, նուազեցուցանել: պատնէշ ածել, փակել, սահմանել, չափաւորել (ոչ է'ի կիր):

To Retrench, Բ, ն. Հատանել կամ չափաւորել զաւելորդ ծախս, կեալ սակաւապիտուութեամբ:

Retrenchment (ռէտրէնչմէնթ) Գ. Յապաւում, կրճատում, բարձում, նուազութիւն: չափաւորութիւն:

To Retribute (ռէտրիպիտ) Բ, ն. Հատուցանել, վարձատրել, փոխադրել, փոխարինել, տալ զտրիտուրն:

Retributer (ռէտրիպիտ) Գ. Վարձատրիչ, փոխատրիչ:

Retribution (ռէտրիպիտիւն) Գ. Փոխարին, վարձ, տրիտուր:

Retributive կամ Retributory (ռէտրիպիտիւ, ռէտրիպիտորի) Կծ. Որ հատուցանէ կամ փոխատրէ:

Retrievable (ռէտրիվէպլ) Կծ. Զոր մարձէ վերստին ստանալ կամ գտանել:

To Retrievé (ռէտրիվ) Բ, ն. Վերստին ստանալ կամ գտանել: նորոգել, կրկին հաստատել, դարման կամ հնարս գտանել, հայթայթել: յետս կոչել, դարձուցանել:

Retroaction (ռէտրօէյշն) Գ. Ներգործութիւն 'ի վերայ անցերոյն:

Retrocession (ռէտրօէշն) Գ. Յետս դարձում, դարձ յետս:

Retrocopulation (ռէտրօօպիուէշն) Գ. Զուգաւորութիւն 'ի յետուստ կողմանէ:

Retrogradation (ռէտրօգրէյշն) Գ. Յետախաղացութիւն, յետադարձութիւն:

Rétrograde (ռէտրօգրէյշ) Կծ. Յետախաղաց, յետադարձ: ընդդէմ, հակառակ:

To Rétrograde, Բ, ն. Խաղալ կամ դառնալ յետկողմ:

Retræssion (ռէտրօյնէշն) Գ. Յետախաղացութիւն, յետադարձութիւն:

Retromingency (ռէտրօմինջն) Գ. Միգէն 'ի յետուստ կողմանէ:

Retromingent (ռէտրօմինջն) Գ. Որ միգէ 'ի յետուստ կողմանէ (կենդանի):

Retrospect (ռէտրօսպէկտ) Գ. Հայեցուած յետս կամ 'ի վերայ անցերոյ:

Retrospection (ռէտրօսպէկշն) Գ. Հայելին կամ հայեցուած յանցեալսն:

Retrospective (ռէտրօսպէկտիւ) Կծ. Որ հայի յետս կամ յանցեալսն:

To Retund (ռէտընդ) Բ, ն. Բթուցուցանել:

To Return (ռէտըն) Բ, ն. Դառնալ վերստին, դառնալ, դարձ առնել, դնալ կամ գալ անդրէն: շրջան առնուլ, հարկել: շրջել 'ի վերայ, ընծայել, գրել 'ի յանցանս: տալ կամ առնել պատասխանի:

To Return, Բ, ն. Հատուցանել զփոխարինն, փոխարինել, փոխատրել, տալ զտրիտուրն: հատուցանել կամ դարձուցանել անդրէն, վճարել: տալ զհամար կամ զհաշիւ: փոխադրել, փոխանցել, անցուցանել: տալ, ընծայել, մատուցանել:

Return, Գ. Դարձ անդրէն: դարձ, դարձուտ: յետադարձութիւն: շրջան, հողովում, պողոտ, փոխանակութիւն, փոփոխութիւն: արդիւնք, արգասիք, շահ, օգուտ, պտուղ: դրամափոխութիւն, փոխանցում դրամոց: փոխարին, տրիտուր, վարձ, շնորհակալութիւն: հատուցում, դարձուցանելն անդրէն: վերստին դարձ կամ անկումն ('ի հիւանդութիւն): համար, պատասխանի: շրջանակ:

Returnable (ռէտընէպլ) Կծ. Վերստին դարձուցանելի (ըստ իրաւագիտաց):

Returner (ռէտընըր) Գ. Դրամափոխոր վճար կամ անցուցանէ դրամս 'ի ձեռն դրամափոխութեան:

Returnless (ռէտընլէս) Կծ. Սնդարձ, անվճար, անհնարին, անդարմանելի:

Reve (ռիվ) Գ. Վիճակակալ (ըստ իրաւագիտաց):

To Reveal (ռիվէլ) Բ, ն. Յայտնել, բանալ, 'ի վեր հանել, յայտ առնել, ծանուցանել, ցուցանել:

Revealer (ռիվէլըր) Գ. Յայտնիչ, որ յայտնէ կամ ցուցանէ, որ յայտ առնէ:

To Rével (ռիվէլ) Բ, ն. Խրախանալ, շուայտել, զեղիւիլ, անցուցանել զգիշերս 'ի գինարբուս:

Rével, Գ. Խրախճանութիւն, խրախութիւն, շուայտութիւն, զեղիւնութիւն, գինարբուս:

To Rével, Բ, ն. 'ի բաց կորզել, իլիւլ, հանել, թափել:

Rével-rout (ռիվէլըուր) Գ. Սքընխառնիճաղանճից: խրախութիւն արբեցերց:

Revelation (ռիվէլէշն) Գ. Յայտնութիւն: յայտնութիւն սրբոյն Յովհաննու:

Revéler (ռիվէլըր) Գ. Խրախճանալ:

կից, հանդանակող, որ դեղերի 'ի գի- նարբուս, որ անցուցանէ զգիշերս 'ի շուսյտուութիւնս և 'ի դեղիտութիւնս :

Révelry (ռե՛վէրէի) Գ. Խորխուութիւն, խորխանութիւն, շուսյտուութիւն, զեղ- խուութիւն, գիներբուք, ինջոյք ուրա- խութեան :

To Révenge (ռե՛վէնճ) Բ, Կ. Վրէժ խնդրել, վրէժխնդիր լինել, առնուլ վրէժս, հատուցանել, հանել զքէն վրի- ժուն, քինախնդիր լինել :

Révênge, Գ. Վրէժ, վրէժխնդրութիւն, հատուցումն վրիժուց : քէն, ոխ, ոխա- կալութիւն :

Révêngul (ռե՛վէնճօու) ԿԺ. Լի վրէժխնդրութեամբ, վրիժասէր, քինա- խնդիր, չարայուշ, քինաւոր, ոխերիմ, ոխակալ :

Révêngfully (ռե՛վէնճօուլի) Ժ. Վրէժ- խնդրութեամբ, ոգուով վրէժխնդրու- թեան, քինու :

Révêngement (ռե՛վէնճօնդ) Գ. Վրէժ- խնդրութիւն, քինախնդրութիւն :

Révenger (ռե՛վէնճը) Գ. Վրէժխնդիր, վրիժաւու :

Révêngingly (ռե՛վէնճիկի) Ժ. Քինու, վրէժխնդրութեամբ, յանհարկս :

Révenue (ռե՛վէնիու կամ ռե՛վէնիու) Գ. Իկամուտք, մուտք, հաս :

To Réverb (ռե՛վէրբ) Բ, Կ. Անդրա- դարձուցանել, ցրացուցանել (ոչ է 'ի կիր) :

Reverberant (ռե՛վէրբերէնդ) ԿԺ. Անդ- րադարձուցիչ, ցրացուցիչ :

To Reverberate (ռե՛վէրբերէնդ) Բ, Կ. Անդրադարձուցանել, անդրէն դարձու- ցանել կամ հնչեցուցանել : ցրացուցա- նել :

To Reverberate, Բ, Լ. Անդրադա- նալ, դառնալ անդրէն, ցրանալ : անդ- քէն հնչել, արձագանգս արձակել :

Reverberation (ռե՛վէրբերէնդ) Գ. Անդ- րադարձութիւն, ցրացումն :

Reverberatory (ռե՛վէրբերէնդ) ԿԺ. Անդրադարձուցիչ, ցրացուցիչ : լու- սացայտ :

To Révère (ռե՛վէր) Բ, Կ. Յարգել, մեծարել, ակն ածել, պատուել :

Réverence (ռե՛վէրէնս) Գ. Յարգու- թիւն, ակնածութիւն, մեծարանք, պա- տիւ, խոնարհութիւն : Յարգանք, ող- ջոյն, ողջոյն յարգական : Յարգութիւն կամ Վերապատուութիւն (պատուա- նուն եկեղեցականաց) :

To Réverence, Բ, Կ. Յարգել, ակն ածել, մեծարել, պատուել :

Réverencer (ռե՛վէրէնսը) Գ. Որ յար- դէ կամ մեծարէ, ակնածու, պատուա- դիր :

Réverend (ռե՛վէրէնդ) ԿԺ. Յարգոյ, յարգելի, մեծարու, մեծարոյ, պատ- ուական : Վերապատուելի կամ Յար- գոյապատիւ (պատուանուն երկցանց Անգղիացուց) : Right reverend, դերա- պատիւ կամ դերյարգոյ (պատուանուն եպիսկոպոսաց) : Most reverend, ամենա- պատիւ (պատուանուն արքեպիսկոպո- սաց) :

Réverent (ռե՛վէրէնդ) ԿԺ. Ակնածու, պատուադիր, խոնարհամտ, համեստ :

Reverential (ռե՛վէրէնշէլ) ԿԺ. Յար- գական, ակնածու, երկիւղած :

Reverentially (ռե՛վէրէնշէլի) Ժ. Յար- գանօք, յարգութեամբ, երկիւղածու- թեամբ :

Reverently (ռե՛վէրէնշէլի) Ժ. Յարգու- թեամբ, յարգանօք, ակնածութեամբ, պատիւաւանօք, խոնարհամտութեամբ, երկիւղածութեամբ :

Reversal (ռե՛վէրս) Գ. Պատուադիր, ակնածու, որ յարգէ մեծարանօք :

Reversal (ռե՛վէրսէլ) Գ. Նահանջու- մի հրամանի, փոփոխումն վճուոյ :

To Reverse (ռե՛վէրս) Բ, Կ. Զվերին կամ զջրուին 'ի վայր շրջել : Վեր 'ի վայր շրջել, տապալել, կործանել : շրջել, դարձուցանել : փոխանակել, փոփոխել : յետս դարձուցանել, նահանջել, խա- փանել (ոչ է 'ի կիր) :

To Reverse, Բ, Լ. Յետս կամ անդ- րէն դառնալ, խոտորել :

Reverse, Գ. Վեր 'ի վայր շրջումն, այլալուութիւն, փոփոխութիւն, կոր- ծանումն : հակառակն, ընդդէմն : միւս կողմն դահեկանին՝ որ ոչ ունի զպա- տիւ կեր կամ զինիք թագաւորի :

Reversible (ռե՛վէրսիպլ) ԿԺ. Զոր մարթ է դարձուցանել կամ նահանջել :

Reversion (ռե՛վէրսէն) Գ. Դարձ կամ մուտք 'ի ժառանգութիւն զկնի մա- հուան այլոյ : յաջորդութիւն, դարձ, փոխանորդութիւն :

Reversionary (ռե՛վէրսէնթ) ԿԺ. Որ ունի դառնալ 'ի ժառանգութիւն, ժա- ռանգելի կամ ստանալի առյապայս :

To Revert (ռե՛վէրտ) Բ, Կ. Փոխել, շրջել, դարձուցանել : անդրէն դա- ռձուցանել, անդրադարձուցանել :

To Revert, Բ, Լ. Անդրէն կամ յետս դառնալ, վերադառնալ անհանիլ 'ի նոյն :

Revert, Գ. Դարձ (ըստ երաժշտաց) : Revertible (ռե՛վէրտիպլ) ԿԺ. Որ ունի

դառնալ վերստին, որ ունի դառնալ :
Revery (ռեվերի) Գ. Յնորդ մտաց,
բանդագորչանք, զառանցանք :

To Revést (ռեվեստ) Բ, ն. վերստին
դրեցուցանել, զարդարել : վերստին
սալ զիշխանութիւն 'ի ձեռս :

Revéstiary (ռեվեստիարի) Գ. Զգեստա-
տուն, աւանդատուն :

Reviction (ռեվիկտի) Գ. վերստին
կենդանութիւն, նորոգ կեանք :

To Revictual (ռեվիկտլ) Բ, ն. վերս-
տին պատրաստել պաշարս, հանդերձել
կամ նպարսկաւորել :

To Review (ռեվիւ) Բ, ն. Հայիւ
յետս կամ անդրէն : վերստին տեսա-
նել : քաջ կամ մանր քննել : քննել ըզ-
գիրս առ 'ի ուղղել : քննել, հետազո-
տել :

Review, Գ. Հանդէս, համար, խոյզ,
քննութիւն : նորոգ քննութիւն կամ
սրբագրութիւն :

Reville (ռեվիլ) Գ. Նախատինք,
Թշնամանք, անարգանք, կշտամբանք,
անիրաւութիւն :

To Revile, Բ, ն. Անգոսնել, նախա-
տել, անարգել, արհամարհել, կշտամ-
բել :

Reviler (ռեվիլլը) Գ. Նախատիչ,
Թշնամանող, անարգու :

Revingly (ռեվինգլի) Ժ. Նախա-
տանօք, Թշնամանօք, անարգաբար :

Revisal (ռեվիսլ) Գ. Նորոգ կամ
վերստին քննութիւն, հանդէս :

To Revise (ռեվիս) Բ, ն. վերստին
քննել կամ յակն արկանել, հանդէս
առնել :

Revise, Գ. Նորոգ քննութիւն, հան-
դէս կամ սրբագրութիւն :

Reviser (ռեվիսլը) Գ. Քննիչ, քննող,
ոստիկան :

Revision (ռեվիզի) Գ. վերստին
քննութիւն կամ փորձ :

To Revisit (ռեվիզիտ) Բ, ն. վերս-
տին այց առնել կամ յայց ելանել :

Revival (ռեվիւալ) Գ. Նորոգութիւն,
յարութիւն, կազդուրումն, հաստա-
տութիւն :

To Revive (ռեվիւ) Բ, լ. կենդանա-
նալ, յառնել, նորոգիլ 'ի կեանս, վե-
րակենցողել : զօրանալ, որդի առնուլ,
քաջաբերիլ, նորոգիլ, արծարծիլ :

To Revive, Բ, ն. վերստին կենդա-
նացուցանել, յարուցանել, բարձուցա-
նել 'ի կեանս : արծարծել, բորբոքել,
զարթուցանել, զօրացուցանել : քաջա-
ւերել, արիացուցանել : նորոգել, հաս-

տատել : զգաւորացուցանել : սրբել, զը-
տել (ըստ քիմիականաց) :

Reviver (ռեվիւլլը) Գ. Նորոգիչ,
հաստատիչ, զօրացուցիչ :

To Revivificate (ռեվիվիֆիկատ) Բ, ն.
վերստին կենդանացուցանել :

Revivification (ռեվիվիֆիկացի) Գ.
վերստին կենդանութիւն :

Reviviscency (ռեվիվիսենսի) Գ. վերս-
տին կենդանութիւն կամ նորոգու-
թիւն :

Reúnion (ռեյունի) Գ. վերստին
միաւորութիւն : հաշտութիւն :

To Reunite (ռեյունիտ) Բ, ն. վերս-
տին միաւորել կամ յօգել : հաշտեցու-
ցանել, միաբանել :

To Reunite, Բ, լ. վերստին միաւո-
րել, յարել, յօգել կամ կցել :

Révocable (ռեվոկաբլ) ԹԺ. Յետս կո-
չելի, նահանջելի :

Révocableness (ռեվոկաբլնէս) Գ. Լի-
նէյն նահանջելի :

To Révocate (ռեվոկատ) Բ, ն. կոչել
կամ դարձուցանել յետս, նահանջել,
խափանել, ջրել, եղծանել :

Revocation (ռեվոկացի) Գ. Յետս
կոչումն, դարձ : նահանջումն, խափա-
նումն, ջրումն :

To Révoke (ռեվոկ) Բ, ն. Յետս կո-
չել, դարձուցանել, նահանջել : խա-
փանել, ջրել, եղծանել : անդրէն դար-
ձուցանել : հրաժարիլ :

Révokement (ռեվոկամէտ) Գ. Նահան-
ջումն, հրաժեշտ, խափանումն :

To Révól (ռեվոլ) Բ, լ. Ապստամ-
բել, վտարանջել, նշահանել, յառնել 'ի
վերայ : դառնալ, փոխել (ոչ է 'ի կիր) :

Revól, Գ. Ապստամբութիւն, վտա-
րանջութիւն, ընդվզումն : ապստամբ,
խռովեցուցիչ (ոչ է 'ի կիր) :

Revóltd (ռեվոլտ) ԹԺ. Յարու-
ցեալ ընդդէմ, ապստամբեալ, վտարան-
ջեալ :

Revólter (ռեվոլտը) Գ. Ապստամբ,
վտարանջեալ, դիմադարձ, ընդվզեալ :

To Révólve (ռեվոլւ) Բ, լ. Թաւա-
լի, հրովիլ, պոյստիլ, պարբերիլ,
շրջան առնուլ : դառնալ յետս, անկա-
նիլ 'ի վերայ :

To Révólve, Բ, ն. Պոստաբել, Թա-
ւալել, պարբերել : անել զմտաւ, յա-
ծել 'ի մտի, մտախոհ լինել :

Revólution (ռեվոլուցի) Գ. Հորո-
վումն, Թաւալումն, շրջան, պոստա :
փոփոխումն, անբութեան, աղմուկ,
վրդովումն, ապստամբութիւն, իւսօ.

վումթիւն ժողովրդեան : յետախաղա-
ցումթիւն, դարձ անգրէն :

To Revómit (ռիվմիտ) Բ, ն. Անգրէն
կամ դարձեալ փոխել :

Revulsion (ռիվլսն) Գ. Հանելն
բռնութեամբ, ձգումն, կորզումն :

Revulsive (ռիվլսիվ) ԿԺ. Որ ձգէ,
որ թափէ, որ հանէ կամ խլէ :

To Rewárd (ռիուարդ) Բ, ն. Հատու-
ցանել : վարձատրել, փոխարինել, վար-
ձահատոյց լինել, տալ վարձս :

Rewárd, Գ. Վարձ, վարձատրու-
թիւն, փոխարէն, արխուր : հատու-
ցումն :

Rewardable (ռիուարդեալ) ԿԺ. Ար-
ժանի վարձուց կամ փոխարինաց, ար-
դիւնաւոր :

Rewárder (ռիուարդեր) Գ. Վարձա-
տրիչ, վարձահատոյց, փոխարինող :

To Rewórd (ռիուարդ) Բ, ն. Չնոյն
բան ասել կամ երկրորդել :

Rhabárbarate (ռեհարբարեյտ) ԿԺ.
Թրճեալ կամ խաւնեալ խաշնդեղով :

Rhabdomancy (ռեհոմոմանսի) Գ. Գա-
ւաղանահմայութիւն, հմայք 'ի ձեռն
գաւազանի :

Rhapsodist (ռեփոսոփիստ) Գ. Հագներ-
գու, հաւաքիչ ժողովածոյ բանից :

Rhapsody (ռեփոսոփի) Գ. Հագներ-
գութիւն, կարկատուն բանաստեղծու-
թիւն, ժողովածոյ բանք :

Rhetoric (ռեթորիկ) Գ. Ճարտասանու-
թիւն, հռետորութիւն, ճարտասանա-
կան կամ հռետորական արուեստ : Ճար-
տարութիւն կամ ազգուսութիւն բանից :

Rhetorical (ռիթորիկէլ) ԿԺ. Ճարտա-
սանական, հռետորական :

Rhetórically (ռիթորիկէլի) Ժ. Ճար-
տասանորէն, պերճաբանութեամբ :

To Rhetóricate (ռիթորիկէյտ) Բ, Լ.
Ճարտասանել, ճարտարաբանել :

Rhetorician (ռեթորիկէն) Գ. Ուսու-
ցիչ ճարտասանութեան : ճարտասան,
հռետոր :

Rhetorician, ԿԺ. Ճարտասանի կամ
ուսուցչի ճարտասանութեան :

Rheum (ռուսմ) Գ. Հարբուղն :

Rheumatick (ռումէրիկ) ԿԺ. Ախտա-
ցեալ զհարբուղն :

Rheumatism (ռումէրիզմ) Գ. Ախտ
ինչ յառաջ եկեալ 'ի հարբոյնս և 'ի
յօղացաւութենէ :

Rheúmy (ռուսմի) ԿԺ. Հարբոյնալից,
ախտացեալ զհարբուղն :

Rhinóceros (ռոյնոսերոս) Գ. Ունգեղ-
ջիւր :

Rhomb (ռում) Գ. Տարանկիւն (ձե-
լաս երկրաչափից) :

Rhómbick (ռումիկ) ԿԺ. Տարանկիւ-
նային :

Rhómboid (ռումբոյդ) Գ. Տարանկիւ-
նային (ձե քստ երկրաչափից) :

Rhombóidal (ռումբոյդէլ) ԿԺ. Տարան-
կիւնային :

Rhúbarb (ռուարբ) Գ. Խաշնդեղ :

Rhyme (ռայմ) Գ. Եղանակ, չափ,
ներդաշնակաւորութիւն : նմանակերթ
ոտանաւոր, նմանակերթութիւն : ոտա-
նաւոր, քերթուած, բանաստեղծու-
թիւն, տաղ, երգ, նուագ. պտտա-
խանի առ բանն կամ առ հնչումն :

To Rhyme, Բ, Լ. Յանգիլ նոյնա-
վերջ, աւարտիլ նմանակերթ, միաբա-
նիլ 'ի հնչումն ձայնի : տողել ոտանա-
ւորս, չափել ոտանաւոր բանիւք :

Rhy'mer կամ Rhy'mster (ռայմեր,
ռայմստեր) Գ. Տաղաչափ, չափաբան,
որ յօրինէ ոտանաւորս առանց արուես-
տի բանաստեղծութեան :

Rhy'thical (ռիթմիկէլ) ԿԺ. Չափա-
բերական, ներդաշնակաւոր, չափեալ,
նոյնակերթ, նմանակերթ :

Rib (ռի) Գ. Կողք :

Ribald (ռիբալ) Գ. Անղգամ, չա-
րագործ, ժանտ, ասիրատ, եղենա-
ւոր :

Ribaldry (ռիբալրի) Գ. Անղգամու-
թիւն, ասիրատութիւն, ժանտութիւն,
դարձութիւն, զազրութիւն, անառա-
կութիւն, ասկերասանութիւն :

Riband (ռիբան) Գ. Ժապակէն :

Ribbed (ռիբիթ) ԿԺ. Կողիւք զարդա-
րեալ կամ ամրափակեալ, կողազարդ :

Ribbon (ռիբոն) Գ. Տես Riband.

To Ribroast (ռիբրոստ) Բ, Լ. Խոշ-
տանգել, ուժգին դանակոծ առնել
(ասի ընդ կատակս) :

Ricwort (ռիկուորտ) Գ. Զլախոտ :

Ric, Էջ մասնիկ՝ որ 'ի բարդութիւնս
յատուկ անուանց նշանակէ, կղզի, Կալ,
Բայնայնսն :

Rice (ռայս) Գ. Որիզ, բրինձ :

Rich (ռիչ) ԿԺ. Հարուստ, ճոխ,
մեծատուն : մեծագին, պտտուական,
չքեղ, մեծաբանձ, բազմաձախ : ընչա-
ւէս, բազմահարուստ : սաստիկ, բա-
ղում, բազմաուստ : առաւ, բերրի :
ուժեղ, ազգու, զօրաւոր :

Riched (ռիչիթ) ԿԺ. Մեծացեալ, ճո-
խացեալ, լցեալ, առատացեալ :

Riches (ռիչիս) Գ. Մեծութիւն,
հարստութիւն, ճոխութիւն, ինչք,

գանձք, ստացուածք, գոյք : շքեղու-
թիւն :

Richly (ռիչլի) Տ. Հարստաբար, ճո-
խաբար . շքեղաբար : առատապէս ,
լիով, բազմօք : բաշխի, մեծապէս :

Richness (ռիչնէս) գ. Մեծութիւն,
հարստութիւն, ճոխութիւն : շքեղու-
թիւն , պայծառութիւն : առատու-
թիւն, լիութիւն, բազմութիւն : ար-
գասաւորութիւն, պողաւեառութիւն :

Rick (ռիք) գ. Գաղիչ, օրան : գէղ,
շեղջ, կոյտ : Տէս Reek .

Rickets (ռիքիք) գ. Յօգուածացա-
ւութիւն ինչ մանկանց :

Rickety (ռիքիքի) ԹԺ. Յօգուածա-
ցաւ :

Ricture (ռիքիքի) գ. Բացուած .
ծակ, շեղքուած :

Rid (ռիք) Լ. կատարեալ ժամանակ
բայիս to Ride .

To Rid, ք, ն. Զերծուցանել, ճո-
ղարեւել, աղատել, փրկել, աղատ կա-
ցուցանել : սրբել, մաքրել, բառնալ, 'ի
բաց առնուել, հանել :

Riddance (ռիքիքի) գ. Զերծումն,
աղատութիւն : բարձումն : ճեպ : ա-
ւարտ :

Ridden (ռիքիքի) Լ. անցեալ ընդու-
նելութիւն բայիս to Ride .

Riddle (ռիքիքի) գ. Աւեղծուած,
առակ, խրթնաբանութիւն : կնճիռն,
դժուարութիւն : խարեւ :

To Riddle, ք, ն. Լուծանել զառեղ-
ծուածս, մեկնել զառակս : խարբալել :

To Riddle, ք, լ. խրթնաբանել,
ծածկաբանել, երկգիծի կամ պատ 'ի
պատ բանիւք խօսել :

Riddlingly (ռիքիքի) Տ. Գաղտ,
'ի ծածուկ, զանխաբար, յանդէտս :

To Ride (ռայք) ք, լ. Հեծանել,
գնալ երիվարաւ : գնալ 'ի կառս կամ
բարձեալ բերիլ : վարիլ, գնալ, շրջիլ,
խաղալ : աշտանակել 'ի ձի, վարել զձի,
վարժիլ 'ի հեծելութիւն : խարխիս ար-
կանել :

To Ride, ք, ն. Հեծուցանել, բառ-
նալ : չարացար վարել, աշխատ առնել :

Rider (ռայք) գ. Հեծեալ 'ի ձի,
նստեալ 'ի կառս, ձիաւոր, որ գնայ
'ի կառս : ձիավարժ, ուսուցիչ ձիավա-
րութեան :

Ridge (ռիճ) գ. Ողն : ողնայր կամ
ողնաշար : բարձրութիւն, գագաթն,
կատար, արտևան, ծայր, ծագ : սկօս :
այտուց, ուսուցչ, տանիք, յարկ :

To Ridge, ք, ն. Յարկել : ամբառնալ :

Ridgill կամ Ridgling (ռիճիլ, ռիճիլի) գ.
Խոյ կիսաթաղամասուր :

Ridgy (ռիճի) ԹԺ. Բարձրաբերձ,
բարձրացեալ, դիպացեալ, բարձրագա-
գաթն :

Ridicule (ռիպիպի) գ. Ծաղր, ծա-
նակ, կատակ, խաղ, ծաղրական զրոյց :

To Ridicule (ռիպիպի) ք, ն. Խաղ
կամ ծաղր առնել, կատակել, ծանա-
կել, ծիծաղիլ :

Ridiculer (ռիպիպի) գ. Որ ծաղր
առնէ կամ կատակէ :

Ridiculous (ռիպիպի) ԹԺ. Ծաղ-
րական, ծիծաղական, ծիծաղելի, ծա-
ղու կամ ձաղանց արժանի :

Ridiculously (ռիպիպի) Տ. Ընդ
խաղս կամ ընդ կատակս, ծաղրական
իմն օրինակաւ :

Ridiculousness (ռիպիպի) գ.
Ծաղրականութիւն, ծաղրական գոլն :

Riding (ռայքի) ԹԺ. Սուբհանդակ,
որ ընթանայ կամ արշաւէ, որ կար-
գեալ է առ 'ի գնալ երիվարաւ :

Riding, գ. Սահմանք դաւառի :

Ridingcoat (ռայքի) գ. Վերար-
կու կամ թիկնոց հեծելոյ :

Ridinghood (ռայքի) գ. Թիկ-
նոց ինչ կանանց 'ի սէտս ճանապար-
հորդութեան կամ գնալոյ երիվարաւ :

Rie (ռայք) գ. Հաճար, աշարայ :

Rife (ռայքի) ԹԺ. Տիրեալ, զօրացեալ,
յաճախեալ, սփռեալ, տարածեալ :

Rifely (ռայքի) Տ. Յաճախազոյնս,
կարի իմն, ուժգինս, զկնի միմեանց :

Rifeness (ռայքի) գ. Յաճախու-
թիւն, սաստկութիւն, առաւելու-
թիւն :

Riffraff (ռայքի) գ. Աւերորդ կամ
անպիտան ինչ, կղկղանք :

To Rifle (ռայքի) ք, ն. Յափշտա-
կել, աւար առնուել, կողոպտել, գողա-
նալ : բառնալ, ունել, առնուել :

Rifler (ռայքի) գ. Աւարառու,
յափշտակող, կողոպտիչ :

Rift (ռիք) գ. Շեղքուած, պա-
տառուած, ծակ, բացուած :

To Rift, ք, ն. Շեղքել, պատառել
հերձանել, բանալ :

To Rift, ք, լ. Շեղքիլ, հերձանիլ,
բաժանիլ, բացեալ լինել : ձգուտալ :

Rig (ռի) գ. Արտևան, գագաթն :

To Rig, ք, ն. Հանդերձել, յօրինել,
կազմել, պատրաստել : զարդարել, յար-
դարել, պճնել :

Rigadoón (ռիպոն) գ. Կարբաւ ինչ
ուսից :

Rigation (ռայիգըն) Գ. Ուռղուռնի : Rigger (ռիգեր) Գ. Հանդերձիչ, կազմիչ, յօրինող :

Rigging (ռիգինգ) Գ. Հանդերձանք կամ կազմածք նաւու :

Riggish (ռիգիշ) ԹԺ. Պոռնիկական, վաւաշ, վաւաշոտ, պապշոտ :

To Riggle (ռիգլել) Բ, Կ. Տատանել, շարժել : Տես to Wiggle.

Right (ռայր) ԹԺ. Ուղիղ, յարմար, վայելուչ, 'ի դէպ, պատկանաւոր, յանկաւոր : Ճշմարիտ, իրաւ, ստոյգ, հաւատարի, հարազատ : ուղիղ, անսխալ, անվրէպ, ճիշդ : արդար, արդարացի, իրաւացի, անստերիւր, արդարացատ : անշ, անշոյ : ուղիղ, ուղղորդ, կանգուն, ուղղահայեաց : ողջոյն, համբուն : արդար, ամբիժ, անկեղծ, ուղիղ, անարատ :

Right, Գ. Ուղղութեամբ, արդարութեամբ, բարեղք, իրաւամբք, ստուգիւ, հաւատեաւ, տիրապէս, քաջ : Ճշդիւ, անվրէպ : ուղիղ, ուղղակի, ընդ ուղղորդն, շէշտակի : յոյժ, բազմօք, կարի ինն (ոչ է 'ի կիր) : Right honourable, մեծապատիւ. Right reverend, յարգոյապատիւ, գերյարգոյ :

Right, Վլ. Քաջ է, բարեղք է, կարի յիրաւունս :

Right, Գ. Ուղղութիւն, արդարութիւն : իրաւ, իրաւունք, օրէնք, ճշմարտութիւն : ամբժուութիւն, անարաւտութիւն : իշխանութիւն, արտօնութիւն, աղատութիւն : անշ, անկողմն : To rights, ուղիղ, ուղղակի, ընդ ուղղորդն : ուղղութեամբ, անվրէպ, անսխալ, արտաքոյ մուրրութեան կամ սխալանաց :

To Right, Բ, Կ. Իրաւ առնել, հատուցանել կամ տալ իրաւունս, արդարացուցանել :

Right-hand, Գ. Աջոյ ձեռն, անշ :

Righteous (ռայրեւ) ԹԺ. Ուղիղ, արդար, ամբիժ, անարատ, առաքինի : ուղիղ, արդարացի, իրաւացի :

Righteously (ռայրեւի) Գ. Ուղղութեամբ, արդարութեամբ, իրաւամբք :

Righteousness (ռայրեւեան) Գ. Ուղղութիւն, արդարութիւն, ամբժութիւն, անարատութիւն :

Rightful (ռայրեւալ) ԹԺ. Որ ունի իրաւունս, ստոյգ, ճշմարիտ, հարազատ, օրինաւոր : ուղիղ, արդար, արդարացի, իրաւացի :

Rightfully (ռայրեւալի) Գ. Ուղղութեամբ, արդարութեամբ, ըստ իրաւանց, իրաւամբք, ըստ օրինաց :

Rightfulness (ռայրեւեան) Գ. Ուղղութիւն, արդարութիւն, իրաւունք :

Rightly (ռայրի) Գ. Ուղղութեամբ, արդարութեամբ, իրաւամբք, ըստ իրաւանց : քաջիկ, յարմարապէս, բարեղք, 'ի դէպ, ըստ պատշաճի, ըստ օրինաց, արդարապէս : ամբժութեամբ, անարատաբար : ճիշտ, անվրէպ, անսխալ : ուղիղ, ուղղակի, ընդ ուղղորդն :

Rightness (ռայրեւեան) Գ. Ուղղութիւն, անսխալութիւն, անվրէպութիւն :

Rigid (ռիճիգ) ԹԺ. Խիստ, կարծր : անհաստ, դառն, սաստիկ, անողորմ, անհնարին :

Rigidity (ռիճիգիտի) Գ. Խստութիւն, կարծրութիւն, սերտութիւն : անհաստութիւն : դառնութիւն, սաստիկութիւն, բրտութիւն :

Rigidly (ռիճիգիտի) Գ. Խստիւ, անհաստ, սաստիկութեամբ, անհնայ :

Rigidity (ռիճիգեան) Գ. Խստութիւն, կարծրութիւն, սաստիկութիւն, անհաստութիւն :

Riglet (ռիճիկ) Գ. Կանոն, քանոն, շրջանակ :

Rigol (ռայրու) Գ. Բոլորակ, շրջանակ, պտակ :

Rigorous (ռիճիգըւ) ԹԺ. Խիստ, անհաստ, անողորմ, սաստիկ : ճիշդ, զգուշագոյն :

Rigorously (ռիճիգըւի) Գ. Խստիւ, խստագոյնս, անհաստապէս : ճշդիւ, ճշդագոյնս :

Rigour (ռիգըր) Գ. Խստութիւն, կարծրութիւն պնդութիւն : սարսուռ տենդի : անհաստութիւն, ճշդութիւն : խստակրօնութիւն : սաստիկութիւն, դառնութիւն, անգլութիւն, գաղանակութիւն :

Rill (ռիլ) Գ. Վտակ, առու, առուակ :

To Rill, Բ, Կ. Վտականալ, հոսել իբրև զառու :

Rillet (ռիլիտ) Գ. Վտակ, առուակ : Տես Rivulet.

Rim (ռիմ) Գ. Եզր, ծայր, սպառուած, շուրթին, շրջանակ : մաշկ կամ թաղանթ (աղեաց) :

Rime (ռայմ) Գ. Եղեամն : ճեղքուած, ծակ, պատառուած (ոչ է 'ի կիր) :

To Rime, Բ, Կ. Սառիլ եղեմամբ :

To Rimple (ռիմլել) Բ, Կ. Խորշումիլ, կնճռիլ, գալարիլ :

Rimy (ռայմի) ԹԺ. Եղեմալից, եղեմապատ, միգամամ, խոնաւ :

Rind (ռայն) Գ. Կեղև, փեճեկ, պտտեանք :

To Rind, Բ, ւ. Հանել կամ մերկացուցանել զկեղևն :

Ring (ռինկ) Գ. Բողորակ, շրջանակ, բազ, մասնեակ : մատանի : օղ, օղամանեակ : կրկէս : ակումբ, պար, դաս, խումբ : քաղցրաձայն հնչեւն զանգակաց, հնչեւն զանգակի կամ նուագարանաց : հնչեւն, ձայն :

To Ring, Բ, ն. Հնչեցուցանել, հարկանել : ակումբ բողորել, պար առնուլ. շուրջանակի, շուրջ պատել : դնել կամ արկանել զմատանի : արկանել զբազ 'ի ցուռին :

To Ring, Բ, ւ. Հնչել, հարկանել : յորինել զներգաշնտհոլութիւն ձայնի 'ի ձեռն զանգակաց : հնչել, լսելի լինել : հնչեւն արձակել : թնդալ :

Ring-bone (ռինկ-ոսն) Գ. Աջու ինչ յոտս ձիոյ :

Ringdove (ռինկուվ) Գ. Աղւանի որունի զմանեակ 'ի պարանոցի :

Ringer (ռինլըր) Գ. Որ հարկանել կամ հնչեցուցանել, զանգակահար :

Ringleader (ռինլիւդըր) Գ. Պարագլուխ կամ գլուխ աստամբաց :

Ringlet (ռինլետ) Գ. Մատանի փոքրիկ : օղ, օղամանեակ : բողորակ, շրջանակ : ակումբ, պար : խոպուպի հերաց, վարդի գալարածոյք :

Ringstreaked (ռինկսթրիքթ) Գ. Բողորախայտ կամ գորշախայտ, պիսակ :

Ringtail (ռինկեյլ) Գ. Թռչուն ինչ յափշտակիչ :

Ringworm (ռինկուււրմ) Գ. Որբիւն :

To Rinse (ռինս) Բ, ն. Ողողել, լուանալ :

Rinser (ռինսըր) Գ. Որ ողողել կամ լուանայ, լուացող :

Riot (ռայըր) Գ. Չեղխութիւն, շուայտութիւն, անառակութիւն : աղմուկ, կապ, յուզմունք, խռովութիւն, աստամբոութիւն : To run riot, աղմկել, խռովեցուցանել, աղմուկ արկանել, աղմուկ կամ խռովութիւն յարուցանել :

To Riot, Բ, ւ. Չեղխել, շուայտել, անառակիլ, անկարծանալ : կազել, վեճել, աղմուկ յարուցանել : յուզել, շարժել, աստամբեցուցանել :

Rioter (ռայըրըր) Գ. Շուայլ, զեղխ, անառակ, վատնիչ : աստամբեցուցիչ, խռովարար, աղմկայոյղ :

Riotise (ռայըրիս) Գ. Չեղխութիւն, անառակութիւն (ոչ է 'ի կեր) :

Riotous (ռայըրուս) Գ. Չեղխ, շուայլ, անառակ, անկարգ, սանձարձակ : աղ-

մկայոյղ, խռովալից, խռովայոյղ, խռովարար :

Riotously (ռայըրուս) Գ. Չեղխութեամբ, շուայտութեամբ, անառակութեամբ : աղմուկ, խռովութեամբ, աստամբոութեամբ :

To Rip (ռիփ) Բ, ն. Հերձանել, պատառել, ճեղքել, կեղեքել, քակտել : խլել, հանել, թափել : բանալ, յայտնել, 'ի վեր հանել, քննել, յուզել, հետազօտել :

Ripe (ռայփ) Գ. Հասուն, հասեալ : կատարեալ, կիրթ, զբօն, խոհական : յարմար, չափահաս :

To Ripe, Բ, ւ. Հասանել պտղոց, հասունանալ, ժամանել : Տեսu to Ripen.

To Ripe, Բ, ն. Հասունացուցանել, հասուցանել, աւարտել :

Ripely (ռայփլի) Գ. 'ի հասեալ կամ 'ի գեպ ժամուռ :

To Ripen (ռայփլն) Բ, ւ. Հասանել պտղոց, հասունանալ, ժամանել :

To Ripen, Բ, ն. Հասուցանել, հասունացուցանել : աւարտել, կատարել, հասուցանել 'ի չափ :

Ripeness (ռայփլն) Գ. Հասուն, հասունութիւն : աճումն, զարգացումն : կատարելութիւն, լրումն : յարմարութիւն, դիպողութիւն :

Ripper (ռիփթըր) Գ. Որ պատառել կամ հերձանել :

To Ripple (ռիփթըլ) Բ, ւ. Ծածանիլ կամ ծփիլ ջուրոց :

Riptowel, Գ. Վարձ կամ պարգև ինչ հնձոյաց :

To Rise (ռայզ) Բ, ւ. Յառնել, կանգնել, ելալ, ելանել : ծագիլ, երևիլ : բարձրանալ, ամբառնալ, դիզանալ : ուռնուլ, պաննուլ, ցցուիլ : բլիւնել, յառաւ գալ, գոյանալ : երևիլ, յանդիման լինել, գալ 'ի տեսութիւն : յառնել 'ի վերայ կամ ընդդէմ : աճել, բազմանալ, մեծանալ, առաւելուլ : յառնել 'ի մեռելոց, կենդանանալ : դիպել, հանդիպել, պատահել :

Rise (ռայզ) Գ. Յառնելն, կանգնումն, ելք : վերելք, դառ 'ի վեր : բարձրութիւն : ելք կամ ծագումն արևու : աճումն, առաւելութիւն : սկիզբն, ծագումն, աղբիւր, արմատ, սկզբնաւորութիւն :

Risen (ռայզլ) Է. անցեալ ընդունելութիւն բայիս to Rise.

Riser (ռայզըր) Գ. Որ յառնել :

Risibility (ռիլիբիլիթի) Գ. Ծիծաղուկանութիւն :

Risible (ռիսիբլ) ԹԺ. Ծիծաղական, ծաղրական, ծիծաղելի:

Risk (ռիսկ) Գ. Վտանգ:

To Risk, Բ, Կ. Արկանել 'ի վտանգ, վտանգել:

Risker (ռիսկեր) Գ. Որ արկանե 'ի վտանգ, յանդուգն:

Rite (ռայթ) Գ. Արարողութիւն, ծէս, հանդէս, սովորութիւն, պաշտօն, կարգ:

Ritual (ռիտիուէլ) ԹԺ. Ծիսական, հանդիսի, արարողութեանց:

Ritual, Գ. Մաշտոց, ծիսարան, գիրք արարողութեանց եկեղեցւոյ:

Ritualist (ռիտիստիստ) Գ. Հմուտ, արարողութեանց եկեղեցւոյ:

Rivage, Գ. Ափն, եղը, գետափն, ծովէզը (ոչ է 'ի կիր):

Rival (ռայվէլ) Գ. Նախանձորդ, նախանձաւոր, հետամուտ: տարփակից, հոմանի:

Rival, ԹԺ. Նախանձաւոր, հետամուտ:

To Rival, Բ, Կ. Նախանձիլ, նախանձ բերել: նախանձաւոր լինել, ջանալ, հետամուտ լինել:

To Rival, Բ, Լ. Նախանձաւոր կամ հետամուտ լինել:

Rivality կամ Rivalry (ռայվէլիթի, Կ. Վէլիթի) Գ. Նախանձիլ, նախանձաւորութիւն, հետամուտութիւն:

Rivalship (ռայվէլիթիթ) Գ. Նախանձաւորութիւն:

To Rive (ռայվ) Բ, Կ. Ճեղքել, պատակել, հերձուր, հերձանել, բաժանել:

To Rive, Բ, Լ. Հերձանիլ, պատակիլ, բաժանիլ:

To Rive, Բ, Կ. Տէս to Derive կամ to Direct.

To Rivel (ռիվէլ) Բ, Կ. Խորշոմեցուցանել: կնձռել, թարշամեցուցանել, թառամեցուցանել:

Riven (ռիվէլ) Է անցեալ ընդունելութիւն բայիս to Rive.

River (ռիվէր) Գ. Գետ:

River-dragon (ռիվէր-դրէգըն) Գ. Վէլչապ գետոյ, կոկորդիլոս: Արքայն Եգիպտացւոց (ըստ Պլտոնի):

River-God (ռիվէր-գոթ) Գ. Չաստուած գետոյ:

River-horse (ռիվէր-հորս) Գ. Գետաձի, ձիագետի, ծովաձի:

Rivet (ռիվիթ) Գ. Բւեռ կամ երկաթ հաստաեալ յերկոսին ծայրս:

To Rivet, Բ, Կ. Հաստաեալ զերկոսին ծայրս բւեռի: պնդել, հաստա-

տել, ամրապնդել: սւեռել, դրոշմել, տպաւորել:

Rivulet (ռիվիուլէթ) Գ. Առու, աւուակ, վտակ:

Rixdollár (ռիքսոլլար) Գ. Արծաթի դահեկան ինչ Գերմանացւոց:

Roach (ռոշ) Գ. Չուկն ինչ գետոյ:

Road (ռոյթ) Գ. Ճանապարհ, պողոտայ: ծովափն ուր արկանեն զխարխիս նաւու: արշաւանք, ատպատակութիւն: Ճանապարհորդութիւն, գնացք:

To Roam (ռոյթ) Բ, Լ. Թափառիլ, աստանդական ջրջիլ, գեղեցիլ, յածիլ:

To Roam, Բ, Կ. Յածեցուցանել, աստանդ ջրջեցուցանել:

Roamer (ռոյթար) Գ. Թափառական, աստանդական, վտարանդի:

Roan (ռոյն) ԹԺ. 'ի դոյն եգիպտացորենոյ:

To Roar (ռոյթ) Բ, Լ. Մռնչել, բառանջել, գոչել, հնչել, ձայն արձակել, աղաղակել:

Roar, Գ. Մռնչիւն, բառանջիւն, գոչիւն: հնչիւն, բարբառ, աղաղակ, կոծ:

Roarer (ռոյթար) Գ. Որ մռնչէ, աղաղակէ կամ գոչէ:

Roary (ռոյթի) ԹԺ. Յողագին, ցոլաւից:

To Roast (ռոյթ) Բ, Կ. Խորովել: չորացուցանել: այրել, սուչորել, բորբոքել:

Roast, ԹԺ. Դնի փոխանակ բառիս Roasted. Խորովեալ, խորովածոյ: Roast beef կամ meat, խորոված, միս խորովածոյ: To rule the roast, տիրել, տիրապետել, ուղղել, կառավարել:

Rob (ռոյթ) Գ. Շարսալ (ըմպելի ինչ բժշկական):

To Rob, Բ, Կ. Յափշտակել, գողանալ, բառնալ, հանել, մերկացուցանել, կողոպտել, կապտել, զրկել:

Róbbber (ռոյթթթ) Գ. Գող, յափշտակող, աւաղակ, հուղկահար:

Róbbbery (ռոյթթթի) Գ. Գողութիւն, յափշտակութիւն, աւաղակութիւն:

Robe (ռոյթ) Գ. Պատմուճան, զգեստ փառաց:

To Robe, Բ, Կ. Արկանել զպատմուճան, զգեստաւորել, զարդարել:

Róbert (ռոյթթթ) Գ. Է ստո ինչ: Robersman կամ Robertsman (ռոյթթթաթն) Գ. Խուճի ինչ աւաղակաց երբեմն յԱնգլիա:

Róbin կամ Robin-red-breast (ռոյթթ) Գ. Թռչուն ինչ կարմրալանջ:

Robóreous (ռոյթթթթ) ԹԺ. Կարնեայ:

Robust կամ Robústios. (ռօստիւստ, րօստիւստ) ած. Կորովի, հզօր, հուժեղու, ուժեղ: բուռն, սաստիկ:

Robústness (ռօստիւստիս) Գ. Կորովու-թիւն, զօրեղութիւն:

Rocambóle (ռօքամբօլ) Գ. Տեսակ ինչ վայրի խտորոյ:

Roche-álum (ռօշէլէմ) Գ. Տեսակ ինչ ընտիր պաղէղի:

Róchet, Գ. Վտաւակ (չապիկ ինչ կրեթիոսական): ձուկն ինչ:

Rock (րօք) Գ. Ժայռ, պարեթ, ապառաժ: բերդ, ամբուլթիւն, ապաւէն: արեկատ, բոք:

To Rock, Բ, Կ. Տատանել, շարժել, դարձել: շարժել զորորան: հանգուցանել:

To Rock, Բ, Լ. Տատանիլ, շարժիլ, դարձիլ:

Rock-doe (րօք-ձօ) Գ. Տեսակ ինչ այծեման:

Rock-ruby (րօք-րուբի) Գ. Տեսակ ինչ մեղեակի:

Rock-salt (րօք-սոլթ) Գ. Աղ հանքային:

Rócker (րօքըր) Գ. Որ շարժէ զորսբան:

Rócket (րօքիթ) Գ. Փամիռուշտ օդաձիք արհեստական հրով:

Rócket, Գ. Խոտ ինչ կծուածամ:

Róckless (րօքլէս) ած. Անժայռ, որ ոչ ունի զժայռ:

Róckrose (րօքրօզ) Գ. Է բոյս ինչ:

Róckwork (րօքուօրք) Գ. Որմբարայտայռ:

Rócky (րօքի) ած. Ապառաժ, ապառաժուտ, քարաժայռ, ժայռաւոր, ժայռալից, առապար, առապարին: վիմարդեան: խիտ, անտեղիտակի, սինգացեալ, քարացեալ:

Rod (րօք) Գ. Գաւազան: գաւազան արքայական: ձող: ձողաչափ: գաւազան խրատու: եղէգն կարթի ձկնորսաց:

Rode (րօք) Է կատարեալ ժամանակ բայիս to Ride.

Rodomontáde (րօքօմօնթէյս) Գ. Պարծուսն, պարծանք, մեծարանութիւն:

To Rodomontáde, Բ, Լ. Պարծիլ, սնապարծիլ, մեծաբանել:

Roe (րօ) Գ. Տեսակ ինչ այծեման էք այծեման, եղն:

Roe, Գ. Կիթ ձկան:

Rogátion (րօգէշէն) Գ. Աղաչանք, մաղթանք, պաղատանք:

Rogátion-week (րօգէշէն-ուիք) Գ. Շաբաթ եւօրեայ մաղթանաց յառաջ քան

ղհամբարձուսն Քրիստոսի վասն պողաբերութեան անոց:

Rogue (րօյ) Գ. Թափառական, աստանդական, դատարկասուն: դող, աւաղակ, սրիկայ, հուղկահար: անզգամ, չարութործ, խառնագնաց, անառակ: ծաղրածու, խեղիատակ:

To Rogue, Բ, Լ. Թափառական կամ դատարկասուն շրջիլ. խեղիատակել: ձեռնածու լինել:

Róguery (րօգիւրի) Գ. Թափառակա նութիւն, աստանդականութիւն, ձեռնածութիւն, խաբէութիւն: խեղիատակութիւն, ծաղրածութիւն:

Rógueship (րօգիւթի) Գ. Անզգամութիւն, չարութիւն, անառակութիւն:

Róguish (րօգիւ) ած. Թափառական, աստանդական, դատարկասուն: ձեռնածու, խաբէբայ: անզգամ, չարագործ, ժանտ, փեսասկար:

Róguishly (րօգիւթի) Գ. Կենդութեամբ, չարութեամբ, անզգամութեամբ:

Róguishness (րօգիւթիս) Գ. Կենդութիւն, չարութիւն, անզգամութիւն: կատակ:

Róguy (րօգի) ած. Անզգամ, խաբէբայ, ստահակ (ըստ ռամկաց):

To Roist կամ to Róister (րօյստ, րօյստըր) Բ, Լ. Խոռովել, ջայրանալ, ժանտանալ: խրոխտալ, յոխորտալ, մեծաբանս սնոտեաց բարբառել, աղմուկ յարուցանել:

Róister կամ Róisterer (րօյստըր, րօյստըրըր) Գ. Խոռովայոյզ, խոռովարար, խրոխտ, մեծաբան, խրոխտապանծ:

To Roll (րօլ) Բ, Կ. Թաւալել, Թաւալեցուցանել, գլել, գլորել: հորովել, պոտյոթել: պարբերել: շրջել, դարձուցանել, թիւրել: գալարել: գնդել, գլնդացուցանել: հոսել, արկանել, խաղացուցանել: պատատել, փաթուլթել:

To Roll, Բ, Լ. Թաւալիլ, հորովիլ, գլորիլ: պոտյոթիլ: պարբերիլ: շրջիլ, դառնալ, խաղալ: ծփիլ, տատանիլ, ալէկոծիլ: մէտ 'ի մէտ խոնարհիլ: Թաւալգլոր խաղալ կամ հոսել:

Roll, Գ. Թաւալուսն, գլորուսն: շրջան: բոլորակ, գնտակ: տումար, մատեան: գլան: ցանկ, համար: դիւան, դիւանագրութիւնք, արձանագրութիւնք, գլրք յիշատակաց, յիշատակարան: պաշտօն, վիճակ (ոչ է 'ի կիր):

Róller (րօլլըր) Գ. Գլան: փաթոյթ, պատտ, կասպ, երիզ:

Rólling-pin (րօլլինգին) Գ. Գլանակ ('ի պէսս խմորոյ):

Rólling-press (ռճւլքի-քըս) Գ. Գլան մամլոյ 'ի պէտս տպելոյ զփորադրեալ պատկերս :

Róllypooly (ռճւլքի-քըս) Գ. Տեսակ ինչ խաղու գնտակի :

Rómage (ռճմաճ) Գ. Ալմուռ, շփոթ :

Románcé (ռոմէնս) Գ. Առասպել կամ կեղծեալ պատմութիւն (շահատակութեանց և տոփանաց) : կեղծիք, ստու- թիւն :

To Románcé, Բ, Ն. Կեղծել, առաս- պելել, առասպելաբանել :

Románcer (ռոմէնսը) Գ. Առասպել- արիւն, առասպելաբան, ստախոս :

To Rómanize (ռոմէնայն) Բ, Ն. Լա տինացուցանել, վերածել յոճ բարբա- ւոյ Հռովմայեցոց :

Romántick (ռոմէնտիկ) Կ. Առաս- պելական : սուտ, ստայոք, կեղծ : ան- ճեթեթ, այլանդակ, մտացածին :

Rómish (ռոմիս) Կ. Հռովմէական, պապադաւան :

Romp (ռոմփ) Գ. Աղլիկ դիւղական, բիրտ և անոպայ : խաղ կը քօսանք դեղը- կաց կամ անճեթեթ :

To Romp, Բ, Ն. Խաղալ դեղջիւրէն կամ անճեթեթս :

Róndéau (ռոնդօ) Գ. Աղգ ինչ վա- ղեմի բանաստեղծութեան :

Róndle (ռոնլը) Գ. Բտրրակ, գըն- դակ :

Rónion (ռոնէն) Գ. Կին յաղթան- դամ և յոյր :

Ront (ռոնտ) Գ. Կենդանի ստու- րամարմին :

Rood (ռուդ) Գ. Չորրորդ մասն միոյ լծավարի : ձող, ձողաչափ : փայտ սրբոյ խաչին, խաչափայտ :

Róódlóft (ռուօլօֆտ) Գ. Բազմոց սըր- բոյ խաչին :

Roof (ռուֆ) Գ. Յարկ, տանիք : տուն, բնակարան, բնակութիւն : կա- մար, վերնայարկ : առաստաղ, ձեղուն : քիմք :

To Roof, Բ, Ն. Յարկել, ձգել զվեր նայարկ կամ զկամար : փակել 'ի տան կամ ընդ յարկաւ :

Roófy (ռուֆի) Կ. Յարկեալ, յար- կածածուկ, որ ունի զվերնայարկ :

Rook (ռուք) Գ. Տեսակ ինչ ագռա- ւու : դղեակ սատրիճ խաղուն : խորա մանկ, խաբէբայ, նենդաւոր :

To Rook, Բ, Ն. Պարեկ 'ի խաղու, նենդել, խորամանկել :

Roókry (ռուքրի) Գ. Բնակարան կամ տեղի ագռաւուց :

Roóky (ռուքի) Կ. Բնակեալ յաղ- աւուուց :

Room (ռում) Գ. Տեղի, վայր, սահ- ման : անցք, ճանապարհ : տեղի, փո- խանակ : դիւրութիւն, պատեհութիւն, միջոց, ժամ, տեղի, առիթ : սենեակ, խուց, բնակարան : In the room of, 'ի տեղի կամ փոխանակ :

Roomage (ռումաճ) Գ. Տեղի, վայր, միջոց, ընդարձակութիւն :

Roominess (ռումինէս) Գ. Ընդարձա- կութիւն, սահման, տարածութիւն :

Roómy (ռումի) Կ. Լայն, ընդար- ձակ, լայնատարր, ընդարձակատարր :

Roost (ռուստ) Գ. Կայարան կամ դարարք թռչնոց : քուն, հանգիստ :

To Roost, Բ, Ն. Պարեկ կամ դարա- րել հաւուց, ննջել կամ 'ի քուն լինել թռչնոց : բնակել, դարարել (ասի ընդ կատակս) :

Root (ռուտ) Գ. Արմատ : յատակ, խորք, ստորին մասն, ոտն : բոյս՝ որ ունի զարմատ ճաշակելի : արմատ, ըս- կիղքն, պատճառ : արմատ, հիմն, հաս- տատութիւն, խարխուլ :

To Root, Բ, Ն. Արմատանալ, արձա- կել արմատ : փորել, պեղել : խորա- սուզել, ընկղմել 'ի խորս :

To Root, Բ, Ն. Արմատացուցանել, խորարմատ տնկել : պնդել, հաստատել, զօրացուցանել : To root out կամ up, խլել յարմատոց, արմատաքի խլել : խլել հանել 'ի բաց, մերթել :

Rooted (ռուտէփ) Կ. Արմատա- ցեալ, խոր, խորին, խորարմատ : հաս- տատուն, հաստատեալ, հաստարմատ, հնացեալ, զօրացեալ :

Rootedly (ռուտէփլի) Կ. Խորարմատ, հաստարմատ, 'ի խորս, խորագոյնս, կարի իմն, ուժգին, հաստատագոյնս :

Roóty (ռուքի) Կ. Արմատալից, բազարմատ :

Rope (ռոփ) Գ. Առասան, ջուան, լար, պարան, մալուխ, տուն, խելք : շարք (ստիկ) :

To Rope, Բ, Ն. Ճարել, հոսել :

Rópedancer (ռոփօնսը) Գ. Լարա- խաղաց :

Rópemáker կամ Róper (ռոփօնսը, ռ- լը) Գ. Չուանագործ, պարանագործ :

Rópery (ռոփըրի) Գ. Անգամութիւն, չարութիւն, նենդութիւն :

Rópetrick (ռոփըրիկ) Գ. Անգամու- թիւն, ապիրատութիւն, գործ արժանի կախաղանի, չարութիւն, նենդութիւն :

Rópinés (ռոփինէս) Գ. Թանձրութիւն,

կուռականուածիւն, խժային հանգամանք:
 Rópy (ռօփի) Թանձր, մածու-
 ցիկ, շաղկահան, խժային, կուռական:
 Róquelaure (ռօփիւ) Կ. Վերարկու-
 կամ ըդդիկ ինչ (թեզանաւոր):
 Roration (ռօրէչն) Գ. Յօղումն, ցօղ:
 Rórid (ռօրիք) Թ. Յօղալից, ցօղա-
 դին:
 Roriferous (ռօրիֆէրըս) Թ. Յօղաբեր:
 Rorifluent (ռօրիֆլէնսէնս) Թ. Յօ-
 ղահոս, ցօղաբուղն:
 Rórary (ռօղերի) Գ. Վարդարան ա-
 ղօթից:
 Róscio (ռօսչիօ) Թ. Յօղալից, ցօ-
 ղադին, խոնաւ:
 Rose (ռօւ) Գ. Վարդ: To speak un-
 der the rose, խօսել գաղտ կամ լռե-
 լեայն:
 Rose, Է կատարեալ ժամանակ բայիս
 to Rise .
 Róseate (ռօժիէր) Թ. Վարդալից:
 վարդադոյն, կարմրափայլ, վարդագեղ,
 վարդահոտ, անուշահոտ:
 Rósed (ռօճք) Թ. Վարդագեղ, կարմ-
 րափայլ:
 Rósemary (ռօճիւրի) Գ. Ռօզմարին
 (Թուփի ինչ մշտագալար և քաղցրահոտ):
 Rose-noble (ռօւնօպլ) Գ. Ոսկի դա-
 հեկան ինչ Անգղիացւոց:
 Róset (ռօղետ) Գ. Ներկ ինչ վարդա-
 դոյն կամ կարմիր:
 Róse-water (ռօւչ-նօրլը) Գ. Վարդա-
 ջուր, վարդաւիշկ:
 Rósier (ռօժիւր) Գ. Վարդենիլք, վար-
 դաստան:
 Rósin (ռօսին) Գ. Ռեւին, խէժ:
 աւիշի բուսոց:
 To Rósin, Բ, ն. Շփել ռեւինի:
 Rósinny (ռօսիննի) Թ. Խժամանան:
 Róssel (ռօսսիւ) Գ. Գետին կակուղ:
 Róstrated (ռօստրէրէք) Թ. Յուկա-
 ւոր (նաւ):
 Róstrum (ռօստրը) Գ. Կտուց (Թուչ-
 նոյ): ցուկ (նաւի): բեմ ատենաբա-
 նուածեան: պատիճ ցբահան գործւոյ:
 դործի ինչ վերահատից:
 Rósy (ռօսի) Թ. Վարդադոյն, վար-
 դագեղ, կարմիր, կարմրափայլ:
 To Rot (ռօր) Բ, ն. Փտիլ, ապակա-
 նիլ, քակտիլ, լուծանիլ:
 To Rot, Բ, ն. Փռեցուցանել, ապա-
 կանել: եղծանել:
 Rot, Գ. Խաշնամահ, ժանտախտ խա-
 շանց: փտուածիւն, ապականուածիւն:
 Róтары (ռօրէրի) Թ. Թուաւարական,
 որ հօղովի իբրև զանիւ:

Rótered (ռօրէրէք) Թ. Հօղովեալ
 իբրև զանիւ, ճախարակեայ, անուաւոր:
 Rótation (ռօրէչն) Գ. Հօղովումն,
 Թաւալումն, շրջանակուածիւն: յաջոր-
 դուածիւն, փոփոխուածիւն:
 Rótator (ռօրէչրը) Գ. Հօղովիլ, Թա-
 ւալեցուցիլ, շրջանակիլ:
 Rote (ռօր) Գ. Ճնար, քնար (ոչ է
 'ի կիր): բանք ուսեալ 'ի բերան՝ առանց
 խմանալոյ զմտա:
 To Rote, Բ, ն. Ուսանել 'ի բերան
 կամ գանձել 'ի մտա՝ առանց ըմբռնե-
 լոյ զմտասա: գործածուածեմք կամ՝
 նիւթապէս ևեթ ուսանել:
 Rótgut (ռօրլըր) Գ. Գարեջուր ան-
 պիտան կամ փրաստիար աղեաց:
 Róther-nails, Գ. Մտուարագլուխ բեւեռք
 նաւու:
 Róttén (ռօրտեն) Թ. Փտեալ, ապա-
 կանեալ, նեխեալ, գարշահոտ, ժահու-
 հոտ: զաղիպալիուն, խախուտ, անհաս-
 տաս: լուծական, լոյծ:
 Rótténness (ռօրտեննէս) Գ. Փտու-
 ածիւն, նեխ, նեխուածիւն, ապականու-
 ածիւն:
 Rótund (ռօրչն) Թ. Բոլորակ, բո-
 լորչի, բոլորածև, գնտակածև:
 Rótundifolious (ռօրչնիֆօլիոս) Թ. Բո-
 լորրասաղարթ, որ ունի զբոլորչի տե-
 ղեւ:
 Rótundity (ռօրչնիթի) Գ. Բոլորու-
 ածիւն, բոլորակուածիւն, գնտակուածիւն:
 Rótundo (ռօրչնո) Գ. Բոլորչի շին-
 ուած:
 To Rove (ռօւ) Բ, ն. Թափառիլ, աւ-
 տանդական կամ վտարանդի շրջիլ: շըր-
 ջիլ յապալտակուածիւն: դանդաջել, մը-
 լորիլ, դեգերիլ:
 To Rove, Բ, ն. Յածիլ, շրջիլ:
 Róver (ռօւրը) Գ. Թափառական,
 աստանդական, վտարանդի: ասպատա-
 կաւոր, հէն: At rovers, վարկպարազի,
 վայրապար, ըստ դիպաց, կոյր զկու-
 ղայն, անխորհրդաբար:
 Rounge (ռոնժ) Գ. Կարմիր գոյն:
 Rough (ռուֆ) Թ. Անհարթ, խոր-
 տաբորտ, դժուարադնան, դժնեայ, ա-
 ռապար: կծու, բարկ, տոխպ: խիտ,
 սաստիկ, անաշուտ, խոժոռ: դժուա-
 ըտլըր, անխորժ 'ի լսելիս: բերտ,
 սոպու, անուպալ, ամարդի, անհամբոյր:
 դժուարին, դժնդակ, դաւն: դժնէհայ-
 եաց, տգեղ, ձառագէմ, զարհուրա-
 տեսակ: անհարթ, անպաճոյճ, ուրուա-
 կան: անհեղ, սոսկալի, անհադին, ան-
 հնարին: անհէթեթ: սյլանդակ, անբե-

րէլի : խռովայոյզ, փոթորիկեալ, ալէ-տանջ :

To Roughcast (ռւֆֆէստ) Բ, ն. Անհարթ կամ անպաշոյճ յօրինել : յօրինել զուրուականն կամ զանհարթ գաղափարն :

Roughcast, Գ. Անհարթ կամ խոշոր փաղափար, ուրուական : խոշոր ծեփ որմոյ :

Roughdraught (ռւֆֆրէֆտ) Գ. Ուրուական, գծագիր, նախարտակ :

To Roughdraw (ռւֆֆրո) Բ, ն. Յօրինել զուրուականն, գծագրել, հանել զնախագիծն, նախարտակել :

To Roughen (ռւֆֆեն) Բ, ն. Բրտաջուցանել :

To Roughen, Բ, և. Բրտանալ, կոր գանալ :

To Roughen (ռւֆֆեն) Բ, ն. Յօրինել զուրուականն, հանել զնախագիծն, գծագրել, ստուկերադրել :

Roughhewn (ռւֆֆիւս) ած. Անհարթ, անպաշոյճ : բիրտ, ամբողջի, անհետեւի, գեղջուկ, անկիրթ, անհրահանգ :

Roughly (ռւֆֆլի) Ժ. Խորտաբերտ : բրտաբար, ամարդուութեամբ, շինականա գոյն : անաչառ, սաստիկ, դժնդակ : անխորթ 'ի քիմն կամ 'ի լեւիս : սաստկագոյն, անհարինս :

Roughness (ռւֆֆիս) Գ. Անհարթութիւն, խոշորութիւն, բրտութիւն - կծուութիւն, սուպութիւն : խստութիւն : սաստիկութիւն : ամարդուութիւն, գեղջկութիւն, անհրահանգութիւն : անաչառութիւն : աղուութիւն, անզարգութիւն : խոժոռութիւն :

Rought (ռոտ) Է. մղդեմի կատարեալ ժամանակ բայիս to Reach.

To Roughwork (ռւֆֆուրտ) Բ, ն. Խոշորագոյն գործել :

Rounceval (ռունսիւէլ) Գ. Տեսակ ինչ ուղեռան :

Round (ռունս) ած. Գլանաձև : բոլորչ, բոլորակ, բոլորաձև. գնտաձև, գնտական, գնտակակերպ : ոլորտաձև, գիւրին : ամբողջ, անթերի, կատարեալ, լրացեալ, մեծաբանակ կամ երևելի (գուժար գրամոյց) : պարզ, յայտնի, անկեղծ, համարձակ, ուղիղ : արագ, ուժգին, հապճեպ : խիստ կամ անաչառ իմն : հարթ, ոլորիկ, ճախարակեայ :

Round, Գ. Բոլորակ, շրջանակ, բոլորչ, պսակ : գունտ, գնտակ : սաստիճան կամ մասն սանդղոց : շրջան, պլտոյս, դարձ, ընթացք : շրջանակութիւն, պարբերութիւն, բոլորումն : յաջորդու-

թիւն, փոխանակութիւն : պահակերութիւն, պահպանութիւն :

Round, Ժ. Ընդհանակի, յամենայն կողմանց : շրջան կամ պար առեալ : բոլորաձև : ոլորտաձև, պատելով : ոլորոյն :

Round, Կի. Ընդ, շուրջանակի, զ : To Round, Բ, ն. Պատել, բոլորել, շրջան կամ պար առնուլ : շրջանակել, բոլորակել, ոլորտայուցանել : ամբառնալ, կատարելադրծել : ճախարակել, հարթել, ոլորիկել :

To Round, Բ, և. Բոլորիլ, ոլորտանալ, գնտանալ : շնջել կամ ազդել ինչ յունկն : պահակերել, շրջել գաղափար 'ի պահպանութիւն :

Roundabout (ռունսիւտոտ) ած. Ընդարձակ, տարածեալ : անուղակի, շրջապտոյս, խտտորական :

Roundel կամ Roundelay (ռունսիւլ, ռունսիւլի) Գ. Աղջ ինչ նախնի բանաստեղծութեան : պատնէշ, շրջապատ, բոլորակ :

Rounder (ռունսիւլ) Գ. Ըրջապատ, շրջափակ, պատնէշ, ցանկ :

Roundhead (ռունսիւլի) Գ. Բոլորակ գլուխ (այսպէս կոչին ոմանք 'ի կալվնական աղանդաւորաց) :

Roundhouse (ռունսիւտոս) Գ. Բանսինչ :

